


398.2

ԱՆԷՑՔՆԵՐ


A 30296



Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. ՎԱՐԳԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1883



Доз. Цензурою. Тифлисъ, 7-го Января 1883 года.
Тип. М. Вартаилица и К.-", на Троиц. пер. д. № 11.

ԱՆԷԾՔՆԵՐ

Անիծեմ՝ անիծուիս,
Ոտն 'ի գլուխ պղօձկուիս.
Ելնես հաւէն՝ ընկնես թաւէն.
Զ'պրծնես գլխուդ ցաւէն:

Անէծքը երկու բերնանի թուր ա-
ծա՛ դէս կկտրի՛ ես՛ դէն:

Գրո՞ղը տանի քեզ, սրդի:
Գրողն ու մահը քեզ խեղտի:
Քեզ տենամ ջուխտ աչքդ սխալտակի:
Աչքդ երգկուամն ըլնի, քամակդ փոսուամը:
Էթալդ ըլնի՛ դալդ չըլնի:
Ծակ-ծակ լաշին նստես:
Ումբրդ լորի պոչ դառնայ:
Ինչքամ ուտես՝ չկշտանաս:
Մի մաշկով հազար տու՛ն մննես,
Տուն չգտնես՝ օձի բուն մննես: (աղջկան)
Մուրազդ փորիդ մեռնես, սրդի:
Զեռդ կանանչի մեկնես՝ փուշ գալ:

- Կաննես՝ միտք թափի. նստես՝ ոսկորներդ:
Բօյդ գեննին մաշես:
Աչքդ բաց ըլնի, միջին լիս չըլնի:
Լիզուդ պապանձուի:
Լիզուդ ծործորակովդ դուս գայ:
Յանկարծակի գաս:
Ժուռ ու մուռ ըլնես, որդի:
ii Քեզ տենամ՝ ջնջնոտես. քրքրուես. քձձուես:
Հացդ ձիաւոր դառնայ, դու ստաւոր. վազես ետե-
ւիցը չհասնես:
Գատես, դատես՝ քիսիդ ուր ծակ ըլնի:
Մանգրուն նստես աչքիդ լսիցը:
Ջհանդամն էթաս՝ իսրի պուճախը:
Քեզ տենամ էն օրն ընկնես, որ շուներ ձեռիցդ
Հաց չառնի:
Գրողի ջիգէն փորդ մննի:
Գրողը պիպիկիցդ կպնի, էլ պոկ չգայ:
Գրողի գաֆդարում գրուես:
Քեզ տենամ՝ գրողի փայ ըլնես:
iii Բօյդ գետինը մննի:
Տղամարդ մեռնես:
Գետինը գարանես:
Բօյդ գեննին հաւասար պահես:
Ծառով, ճղնով թաղեմ քեզ, որդի:
Քեզ չօքած բարովես:
Դռնէ դուռն ընկնես, ամեն տեղից մաղբուն դուս գաս:
Աստօժ քեզ քոր տայ՝ դունգ չտայ:
Սև ոճորքի տակին ապրես:
Քեզ տենամ գիլանոնց փայ ըլնես, իշալլահ:
iv Բալէդ թուռնդիրն ընկնի:

- Քալէդ աղաքիդ թպաւորիկ գայ:
Պիպիկդ կարեմ:— Պիպիկդ հանեմ:
Կատածդ բարձիդ տակին ուտես:
Սև կոսպանդ կապես, որդի:
Բօյդ խամ թելով չափեմ:
Ոններդ տախտակին լուանամ:
Վայիդ նստեմ, որդի:
Ջանդ եաման եարէն ընկնի:
Քեզ տենամ, անմահ մեռնես:
Մուղնու եարէն վրէդ թափի:
Լիզուդ չորանայ:
Գրողն ու մահը փորդ մննի:
Գետինը քուքուրթ դառնայ, սող կրակ. որդէ
զնես՝ էրի, փոթոթի:
Դառը դատես, մաղբուն մնաս:
Ժուէդ քամին տանի:
Արէնկօլօլ ըլնես:
Գեննին գերի ապրես:
Ո՛չ մենծանաս, որդի:
Բօյդ կօլօլ գերեզման անեմ:
Պատանդ սև թելով կարեմ:
Լէնքդ նստեմ, երկէնքդ լամ:
Սևակօլօլ ըլնես:
Կերածդ փորիցդ դուս չգայ:
Ազիդ բալէդ մեռնի:
Շուն ու գէլի փայ ըլնես:
Ղարա-խաբարդ տուն գայ:
Ոտդ գէնը, կրունկդ գէսը:
Ախ ու վախով ապրես:
Օջաղդ չորանայ:

- ՎՍ Տու՛ն ու տեղդ մոխիր դառնայ, մոխիրը քամին տանի:
Տու՛նդ կրակ ընկնի, բալէքդ քուլ դառնայ:
Էրեխայ բերես, չկնքած մեռնի:
Մին ու ճարդ մեռնի:
Քեզ տենամ-բուքուն ածի՛ կուկուն տանի:
Դու աշխատես՝ խալխն ուտեն:
Քիսու՛մդ բարաքեաթ չըլնի:
Քուլս կոտիդ:—Փողեմ գլուխդ:—Յիսեմ գլուխդ:—
Տիրամօր եարէն ընկնի վրէդ:
Առանց կարմիր-կանանչ կապելու թաղեմ քեզ, որդի:
Ղզլջէն քեզ տանի:—Ծաղիկը քեզ տանի:
Արևդ խաւարի:
Գրողը քեզ չուփի:
Քեզ տենամ՝ գունդ ու կծիկ գաս:
Զօքէ չօք օխտը սրբի դուռ էթաս:
Քանց փշատի՛ կռանաս. քանց ճարճարտուկ՝ չո-
րանաս. քանց բարդի՛ երկարես:
Աստօժ քեզ պահի գլխիցդ վերև:
Գծուես. կատաղես. սար ու ձոր ընկնես:
Տու՛նդ քանդուի:—Շէմդ շարուի:—Դուռդ շինուի՛
բալանիքը կտուրն ընկնի:
Տու՛նդ բաբախլորդի ըլնի:
Տանդ սունկ դուս գայ:
Գլուխդ խուրջնումը գայ:
Օր ու մէջ ապրես:
Աստօժ ինձ տենայ՝ քեզ վեր ունի,
Կերածդ՝ եդի առջի թիքէն ըլնի:
Լերդ ու ջիգեարդ խաշուի:
Ղուրդունի գաս:
Գրողդ քօռանայ, սր քեզ չի տենում:

Թուխսդ (ծնողդ) քօռանայ:

Սերմդ չորանայ:

Քօքդ (ազգդ) աղանձուի:

Յօտդ կտրուի էս տանիցը:

Քեզ տենամ՝ էփուես ու թափուես:

Գլուխդ գլխափոսերը մննի:

Հացդ երկաթ դառնայ:

Ճամփէդ փուշ ու տատաշ ըլնի:

Դժոխքի փայ ըլնես:

Քեզ տենամ՝ ծակծկոտես, դեղին ջուրդ դուս գցի:

Ոտդ կտրուի:

Աչքդ քօռանայ:

Դատես, դատես՝ մաղբուն նստես:

Լիզուդ եարայ փարայ ընկնի:

Գրողն ու մահճը քեզ տանի:

Տունդ հրեղէն սուր մննի:

Սաւ ու սամուրդ կտրուի:

Քեզ տենամ՝ ղուբուրդ էս տանիցը գուս գայ:

Մահման դեղ ուտես:

Օձի բնին նստես:

Թիքումդ գտնուի:

Գրողն ու մահճը լերդ ու ջիգեարդ խաշի:

Արէնշորեր ըլնես:

Ոչ խնդաս, քեզ տենամ:

Աշխարում լաւ օր չտենաս:

Աչքերդ խաւարի:

Աշխարի երեսին ո՛չ լիանաս:

Աստօժ ինձ տենայ՝ քեզ գռնակի:

Աչքդ ըլնի՝ լիս չըլնի. օլօքդ (ուրդն) ըլնի՝ միս չըլնի:

Միսդ շապկահան ըլնի:

Աստու հուր ու կրակը վրէժ թափի:

Աստու պէճ պէճ կրակը վրէժ թափի:

Ճախմանն Տէրը քեզ փչացնի:

Կարմիր գիւլի ուստ գաս:

Վարձքդ շունն ուտի:

Ճանճ դառնաս՝ պատիցը կպնես:

Աչքիդ լիսը սիպտակի:

Աչքդ բնահան ըլնի:

Աչքիդ լսիցը զուրկ ապրես:

Լաւ լարանի գաս, չար պարանի:

Մէկիդ թաղումն ըլնի, մէկելիդ էզնաֆողէքը:

Փողը հալիդ:

Աստօժ գլխիդ քար գցի:

Միսդ ուտեմ, արինդ խմեմ:

Լերդ ու թօքդ փորումդ տրորուի:

Սիրտդ մեռնի:—Ճարդ կտրուի:

Մայիֆ պահեմ քեզ:

Անջուր քարվան էթաս:

Քարէ քար ապրես:

Սեւալաչակ ըլնես: (աղջկան)

Մազդ խուզուի, անջի:

Ոչ ու փուչ ըլնես, որդի:

Թիկունքդ գեննին մաշես:

Մասինն ընկնի գլխիդ:

Լիզուդ պապանձուի:—Լիզուդ սև օձը կծի:

Քեզ տենամ՝ զուրդունի գաս:

Չօռ:—Յաւ:—Ձղկում:—Ձահրմար:—Գարդ ու բալայ:

Ձանիդ վրէն տրորուես:

Ընկնաւորես՝ գողցող սուրբ Գէորգայ դուռն էթաս:

Աչքիդ լիսը հանեմ, տեղը կտրեկ ցանեմ:

Էնքամ ապրես, որ ասեղը տնկես՝ հովին նստես:

Չքուես. չորանաս. չոր քարին սլազես:

XV Քեզ տենամ՝ եղովդ տասպահուես:

Պատէ սլատ ման գաս:

Սրժանի չըլնես Ֆողին:

Քեզ տենամ՝ գեննին դերի ապրես:

Փոզիդ լիսին տաս:

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

Օ Ր Ի Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Աստօժ քեզ պահի, որդի:

Հէր Աբրահամի օրհնութիւնը վրէժ ըլնի:

Սիմօն ծերանաս:

Օխտը որդով սեղան նստես:

Աստօժ էն հացը տայ՝ որ ո՛նչ հատնի, ոնչ պակսի:

Ո՛ր դիհն էթաս, Աստօժ բանդ աջողայ:

Զորի քարին էթաս՝ աղաքդ կանանչ գայ:

Քեզ ումբը-արև:

Քեզ սաղ ջան ըլնի:

Կռներդ կանանչեն:

Ախրդ խէր ըլնի:

Վերջդ բարի ըլնի:

Ո՛չ ախ ու վախ քաշես:

Ումբըդ երկար ըլնի:

Աստօժ մինդ հազար անի:—Երկէն կուռդ չ՝ կարճացնի:

Օջաղիդ հաստատ ըլնես, որդի:

Աստօժ քեզ հոգով զարդարի:

Զօրանաս.—ճղքճղքնոտես:

Մին դնես՝ հազար վեր ունես:

Ճամփիդ փունջ մանիշակ դուս գայ:

Հալիորես. ծերանաս. թոռան, ծռան տէր դառնաս:

Շատ դատես՝ շատ ուտես. քիչ դատես՝ էլի շատ ուտես:
Փուշ բռնես՝ վարդ դառնայ:
Գվօրն էթաս՝ ոտդ քարին չդիպնի:
Ֆող բռնես՝ ոսկի դառնայ:
Ծլես, ծաղկես, կանանչես—բարով եարիդ ճանանչես:
Բարի լիշատակ ըլնես, սրդի:
Բար ու նուբարը արեդ:
Աստօժ աթօռին նստի՝ քեզ օրհնի:
Հէրն ու մէրդ լսի փայ ըլնեն:
Բարով կանանչ-կարմիրդ կապեմ:
Աստօժ քեզ օր տայ:
Հոգիդ լիս դառնայ, տանի:
Արքայուսթիւնի բաժին ըլնես:
Դատաստանդ քաղցր ըլնի:
Աստօժ էրկսիդ մի բարձի ծերացնի (մարդ ու կնկան):
Թագ ու պսակիդ արժանանաս, սրդի:
Մուրազիդ հասնես:
Թագդ համբրեմ:
Թագ ու պարծանք ըլնես:
Յամաք աչքով ծերանաս:
Տան քօթուկ ըլնես (երկար ապրես):
Ջաղացիդ նօբաթ ըլնի. կալիդ՝ քամի:
Հոգով ուրախանաս:

ԵՐԴՈՒՄՆԵՐ.

- Աստօժ. երկիրնք. զեփինք. ծով. ցամաք:
Էն ժամը վկայ:
Էն պաշտօն պատարագը վկայ:
Էն կանանչ Մեռօնը վկայ:
Էն նշխարքը վկայ. էն բաժակը վկայ:
Էս բարի օրը վկայ:
Աստօժ վկայ:
Էն Հացը վկայ:
Արևս վկայ:
Հօրս գերեզմանը վկայ:
Պարտական ըլնեմ լաւուր դատաստանի՝ թէ սուտ
եմ ասուամ:
Խաչը վկայ:
Էն Քրիստոսը վկայ:
Էն սուրբ Աստօժածինը. էն սուրբ Կարապետը:
Հաղորդը գիտենայ: Քրիստոսի «Առէք, կերէքը»
վկայ:
Էս Հացը Ֆողուս չգտնուի, թէ սուտ եմ ասուամ:
Ես ըլնեմ իմ Ֆողին:
ձրագի Հեա Հանգչեմ, թէ սուտ եմ ասուամ:
Էս Հացի բարաքեաթը գիտենայ:
Ֆողի ունեմ տալու:

Իմ ու քու արևը վկայ:

Մուրադիս ս'չ հասնեմ, [Թէ սուտ եմ ասում:

Հօրս ֆոզին վկայ:

Իմ մինուճար որդու արևը վկայ:

Օճաղի բարաքեաթը վկայ:

Էն սուրբը վկայ:

Աւետարանը վկայ:

Փոզիս սատանի փայլընի, [Թէ սուտ եմ ասում:

Էս ճրագը վկայ:

Էս հացին քօւ մտիկ տամ:

Գետինն անցնեմ, [Թէ սուտ եմ ասում:

Էն Հազարափրկիչը գիտենայ:

Էն վանքը վկայ:

ԾՈՒՑԱՍԵԼՈՒԿՆԵՐ*)

Մի տաշտ հով ճաթ,

Մի տաշտ տաք ճաթ.

Մի տաշտ ճակճրկոտած ճաթ:

Ծիտը ճմանը ճիտը ծռել ա:

Տանձի ծառի ծէրին մի ծանգր տանձ կալ ծէրին:

Ուլը նի էլաւ ուռի ծառը, ծուռ պօշովը ուռ օլորեց:

Էթամ, դամ՝ բալաք սան ճակատը պաչեմ:

Ալիբ, ալիբ, ալիբ...:

Բարով քեզ, խոփակապ, կէփակապ, տէփակապ
Ա.կոր ապէր—Ինձ հմար մի խոփ կապի, մի կէփ կա-
պի, մի տէփ կապի՝ անուճ դնեմ—խոփակապ, կէ-
փակապ, տէփակապ Ա.կոր ապէր:

*) Հուտ-ասելուկները մի քանի անգամ են կրկնուճ և այն՝ արագ կերպով:

Ըստէ նօթատուճ, ընդէ նօթատուճ,
Չալ ծտին՝ չալ ծտաճուտ:

Կեռ, կեռ անցկէք՝ թեփոած ագռաւ:

Պօզ, պօզ՝ խըրթըպօզ.
Օխտը վարազ, օխտը խօզ:

Մեր բազումը կայ տասը տանձի ծառ՝ տասը ծառի
ծէրին ծանդը տանձ մը կախ. ձեր բազումն էլ կայ
տասը տանձի ծառ՝ տասը ծառի ծէրին ծանդը
տանձ մը կախ:

Պանպի, իմ պարկում մի-պարկակասլ կայ. քու պար-
կումն էլ մի պարկակասլ կայ:

Ճանճը նստէ տաշտի պըռկին՝ տաշ կէնայ. տիւռ,
չալապօջ, տափլակ ճակատ բաշ աչառ:

Չուկ գցեմ՝ ձուկ կուլ տամ,
Մուկ գցեմ՝ ձուկ կուլ տամ:

Քեռի, էլի էն ալըէն առ:

Ջորին ջրի ձորումը՝ ջուլը փորումը:

Ջորին ձորումը ջուլը ծռեց:

ՓԱՂԱՔԾՆԿԱՆ ԽՕՍՁԵՐ

Զորդ տանեմ:

Գլխովդ պտիտ դամ:

Գարտդ տանեմ:

Փողուդ մեռնեմ:

Ղաղէդ առնեմ:

Զանիդ մեռնեմ:

Ղուրբանդ ըլնեմ:

Աչքերիդ զուրբան:

Անըմիդ մեռնեմ:

Ոտիդ տակի ֆողն ըլնեմ:

Արևիդ մեռնեմ:

Փողուս ճրագ:

Գլխիդ զուրբան:

Շունդ ըլնեմ:

Բօլիդ զուրբան:

Երեսիդ զուրբան:

Ա Ռ Ա Տ Ն Ե Ր .

Ձահէլութիւն՝ խօշութիւն, թէ կարենաս՝ մաշա՛.
Ծերութիւն՝ գօթութիւն, թէ կարենաս՝ քաշա՛:
Ընչանք հաստը բարակի՝ բարակի ֆոգին գուս կգայ:
Պղինձը վեր ընկաւ՝ չկոտորուեց, համայ ձէնը վեր
էլաւ:

Սէլը որ շուռ գայ՝ ճամփէն բաց կըլնի:

+ Մարդ ձմեռը կատու դառնայ, ամառը՝ շուն:

+ Գէլից փախայ՝ արջի ճանկն ընկայ:

Փուքս փչողի խօսքը չի՝ անց կենայ:

Մինը կովիցը, տասը շովիցը:

Սովածը երազում հաց կտենայ, ծարաւը՝ ջուր:

Փորթը կովին, կովը ֆորթին՝ գլուխը ցաւի տաւա-
րածի:

Բռումս թքի՝ տամ ճակատովդ:

Բանն ասելօն կըլնի:

Ո՛նչ էծ ունենք, ոնչ ուլ՝ սատանի անկաջը խուլ:


+ Իրուստ խօսքը հանաքով կասեն:

Քիչ բարձա՛, թէզ բարձա՛:

Ուղտ նիլնողը կուզէ կուզ ման չի գայ:

Սաղ ըլնեմ, Բաղգաղ ըլնեմ:

Ակօսը մենձ գոմշից ա ծովում:



Գլխիս տալու վէքիլն ես, աչքս դուս գալու վէ-
քիլը չեմ:

Դարդ անողի դարդը չի պակսի՝ քե՛ք անողի քե՛քը:
Թէ կգալ աջալ՝ չի տալ մաջալ:

Ահի տարին ինչ էր, որ մահի տարին ինչ ըլնի:
Սե շանը դարադաշ մի ասի:

Ներքե [թքեմ՝ միրուքս ա. վիրե [թքեմ՝ երեսս ա,
Աշխարուժս մին դո՛ւ՝ մըն էլ ես:

Թամամ խօսքը իշին կասեն:

Խօսքը էշ նիլնիլը չի. խօսքը՝ վէ գալն ա:

Առուն [Թռի՝ եննայ «բարաքեալլայ» ասեմ:

Աշրդին տուն չէին [Թողում՝ ասում էր — սագս ո՛ր-
դէ կախ տամ: —

Իրանց տանը կուտ են ուտում, խալխի տանը ձու
ածում:

Ագուաւին հարցրին. — դշերի միջին ո՛րն ա սիրուն.
ասեց — իմ ճուտը:

Վարար անձրևը [Թէզ կկտրուի:

Աղքատ ու հպարտ:

Շունը շան լիզուն կիմանայ:

Հալը հալին դասաբ ա, [Թուրքը [Թուրքին մասաբ ա:

Հալալը մազ դառնայ՝ չի կտրուի. հարամը գերան
էլ դառնայ՝ կը կտրուի:

Ղուշխունիցդ վիրե մի գցի:

Ամանաթը ֆողն ա պահէ:

Էդ հա[Թա[Թէն ձեր կովին տո՛ւ՝ որ կաթ տալ:

Մի տանից ենք՝ մի հալից ենք:

Ամեն մարդի դարդ իրա հմար ուղտ ա:

Աղքատին ծեծեցին՝ տանը պարծեցաւ:

Շատ հաղ զիտամ, ափսոս ձէն չունեմ:

Սիպտակ շուներ բամբակի ծախողին գիան ա:
Լուի հմար կարպետը չեն էրի:
Քարն էլ ա իրա ձեռին՝ պօպօքն էլ:
Իշիցը չեն կարում ինադը հանի՝ փալանին են ծե-
ծում:

Ինադս ինադ ա, անուամս էլ՝ ծուռ-Մուրադ:
Գեղ մանի, գաւառ գզի՝ անուամն ըլնի Շուշան
խաթուն:

Մէլդանդ ու գետրայ ձիդ քշա՛:
Աշխարքս փոխ հաց ա, ոնց անես՝ ընենց էլ կուտես:
Փէտի ցեցը իրանից կըլնի:

Ազատուեցի՝ ջըհանգամը գետու թէ աղջիկ էր:
Ծանդը կաց՝ լիտը կգաս:

Էշն ուտեմ, պօչին խռովեմ:

Ես տանձ եմ ասում՝ դու գանձ ես ասում:

Գեննի տակին կերակուր եփեն՝ աղ գցողը դու ես:
Ուղտն ու համամ:

Մեռլիցը խարջ չեն ուզի,

Տանը չկայ թան ու փօշի՝ գլուխը կապել ա կարմիր
փօշի:

Սէրի կրակը որ Մասսայ գլխին դնես՝ տապանը
կերևայ:

Ընչանք չիրը կթըջի՝ հիւանդի ֆոգին կթուչի:

Հացդ դի՛ հացիս վրէն՝ համ տակից կէ, համ վիրնուց:

Մալը էթայ՝ տէրը հեննէն, որդին էթայ՝ հէրը
հեննէն:

Գնա՛ մեռի, արի՛ սիրեմ:

Գեղ կնստի՛ գաւառ կհաջայ:

Բանի վախտը թողամ փախնեմ, հացի վախտը գամ
պուպուզեմ:

Մի շէնը լաւ ա, քանց էրկու աւերը:

Հացը ծնկանը, աչքը կնկանը:

Շանը կտան՝ տիրոնջը խաթր կանեն:

Եզը որ վեր ընկնի, դանակաւորը կշատանայ:

Էլ էն ջուրն ա, էլ էն ջաղացը:

+ Փլաւ ուտելը լաւ ա, մի օր մեր տանը՝ մի օր ձեր տանը:

Ամեն հաղը հաղաց, մնաց սարի սնգին:

Ընկել ա փողատէրը, կաննել ա տղատէրը:

Էլի եայլին մեր կտերը հաղաց:

Ընչանք աղը գայ՝ մատաղը կէթայ:

Յաւն իսանը կքաշի:

Փորձած թանը մի տայ անփորձ մածնին:

+ Խէրը տենայ Հէրապետը, ջառմէն քաշի Կարապետը:

Մօտիկ հարևանը լաւ ա, քանց հեռու բարեկամը:

Աղաք մերը, եննայ մերոնցը:

Գո՛ղ—սիրտը դող:

Հաջող թագին Փորս չի անի:

Փլաւը տանը թողած՝ ոսպախաշուն ես դրէ աղաքդ:

Մարգամիջի մարդս ըլնի, հազար թուաման պարտքս ըլնի:

+ Զուածեղի խաթեր թաւի կօթը կպաչեն:

+ Կաշառքը մթնումն էլ լիս կտայ:

Խօսքը խօսք կբերի, արշինը՝ կտաւ:

Խօսք կայ, որ սարի գլուխը կհանի, խօսք կայ որ սարի գլխիցը ներքև կբերի:

Կնիկդ որ լաւ ըլնի՝ մի էթայ հարսանիք—տանդ ամեն օր հարսանիք ա ու հարսանիք. թէ կնիկդ

փիս ըլնի՝ մի էթայ մեռլատուն—տունդ ամեն օր մեռլատուն ա ու մեռլատուն:

Մի փորը էրկու տեղ մուննաթ չի՛ անի:

Ուղտին գգալով չեն ջուր տայ:

Մենծի խօսքին անկաջ չանողը սոված կմեռնի:

Քօռն թնչ կուզի—էրկու աչք:—

Փոխը օխտը տուն ա պահէ:

Քիրն ասեց՝ աղպէր ունեմ, աղպէրն ասեց՝ քիր
չունեմ:

Անցկացած բանի ետևից չեն ընկնի:

Ամեն բան վախտին մտիկ կանի, վախտը՝ ոչ մի
բանի:

Աստօծ սարը կտենայ՝ ձինը կդնի:

Ամեն չամիչ իրա պոչը կունենայ:

Ագռաւը ուզեց կաքաւաերիչ էթայ՝ իրանն էլ մտի-
ցը գցեց:

Աստօծ փլաւն ում ա տալի՛ իշտահն ում:

Անհաւատ բանին մի հաւատայ:

Բաղումդ թէ ծիրան կայ՝ բարով էլ կայ:

Գէլը որ սուրուն մննի, վայ մի ոչխարատիրոջ
հալին:

Եզան բեռը որ չծռուի՝ քարը զարբութիւն չի էթայ:

Էծը որ գէլը չտանի՝ Երուսաղէմ կէթայ:

Իշին թավլէն կտանեն:

Իշիցը գարունք չեն հարցնի:

Իշի գերեզմանը գիլի փորումն ա:

Էշը պօչ չունենայ՝ կասեն քուռակ ա:

Լաւ ա մեռնես, քանց ծերանաս, աղքատանաս:

Լաց ընելօն օր չես անցկացնի՝ ծիծաղելօն կ'անց-
կացնես:

Կէս օրին կաթ բերողի երեսը մի տենայ:

Հաւը ջուր խմելիս՝ Աստուծ մտիկ կտայ:

Ամեն Կիկո հաղացուեց, Բասկի Կիկոն մոռացուեց:
Թէ գու աղուէսն ես՝ ես էլ պօջն եմ:
Սաղութիւն՝ սուլթանութիւն:
Փեսի շուաք՝ փշի շուաք:
Հացս գարի ըլնի՝ անկաջս բարի:
Հայր ընչանք չ'բեգարի՝ չի նստի:
Զուկը եք բռնես՝ թագայ կըլնի:
Շատ ման եկողը կիմանայ աշխարի բանը, ոնչ թէ
շատ կարգացողը:
Ո՛վ ալարի՝ ոնչ դալարի:
Տան խօսածը չօլուժը չի անց կենայ:
Մէկին որ լաւութիւն անես, թէ ինքը չիմանայ՝
Աստօժ հօ կիմանայ:
Ո՛նչ հարսանիքը կպակսի, ոնչ սուղը:
Ճամփին էրկաթ գտնես՝ ընկօրգ տո՛ւ. թէ վեր
չունի՝ գլխովը տո՛ւ:
Զ՝ուտողի մալը ուտողին հալալ ա:
Քու մի կովը լաւ ա, քանց հարեանիդ տասը:
Զուրը մի տեղ որ շատ կաննի՝ կՖոտի:
Տունը սինը կպահի:
Տաշտուժը շատ հաց կայ՝ քեզ չկայ մի կտոր:
Քու մասլահաթը թո՛ղ կենայ, տես Աստօժ Քնչ
մասլահաթ ա տենում:
Սատկած կովը կաթնատու կըլնի:
Սիրտը մի շուշայ ա, սր կտորուի՝ էլ չի սաղանայ:
Ե՛ս ուղտը կմեռնի, ե՛ս ուղտապանը:
Օձի գլուխը որ ցաւի, ճամփի վրէն կպառկի:
Փէշքաշ ձիու ատամներին մտիկ չեն անի:
Հայի վերջի խելքն ա գովելի:
Վազողին տղայ չիլնի:

Իմն ու քուն տուն կքանդի:

Ղօրթ խօսողի ձին պտի թամքած ըլնի:

Կատուն կեղծաւոր կըլնի:

Բօշէն պուտկերես կըլնի:

Էրեխի փորացաւը էրեխէն կիմանայ:

Ճրագը իրա տակը լիս չի տայ:

Էշն էլ էն էշն ա՛ փալանն ա փոխէ:

Տուն փոխես՝ տանով մին կքանդուես. գեղ փոխես՝
գեղով մին:

Փսփսալը տուն կքանդի:

Պստիկ ա, համայ չստիկ ա:

Էս քեզ խրատ, էլ չցանես կտուահատ:

Ձան ասն, ջան լի. չօռ ասն, չօռ լի:

Ասողին էլ լսող պտի:

Անուձը կայ՝ ամանուձը չկայ:

Ահը շատ ա, քանց մահը:

Էշն իշի կշտին որ կապես՝ ես նրա խուն կսովորի,
եւ խասեաթը:

Կճուճը թօլ էլաւ՝ խուլիը գտաւ:

Անտէր ժամին ստտանէքը տէր կըլնեն:

Թեւը որ բարակեց՝ կկտրուի:

Էծն իրա ոտիցը կախ կտան, ոչխարն՝ իրա:

Եղը թանգ ա, ճմուռն էժան:

Հացը երեսիցը կուտեն:

Ուլը մորթն հարկ արն, հարսնութիւնդ թարկ արն:

Խէրն անուձ ես, կարմնջովն էլ անցկացրն:

Հայ էլանք՝ հաւատ չտեհանք, թուրք էլանք՝
սիւննաթ չտեհանք:

Չի իմանում ո՞վ ա մեռէ՝ «վայ բարի ջան» ա կան-
չում:

Սոխի կշտին էլ սխտոր կծեծեն:

† Ուրշի ձեռով օձ էլ մի բռնի:

Խնամացանք—բարեբարացանք:

Մեռնեմ՝ մատաղ. ապրեմ՝ հօտաղ:

Կօշտը նստել ա քարի գլուխն ա լալիս:

Քուներ քնի պաշար ա:

Սիրաը սուփրայ չի, որ որդէ ուզես բաց անես:

Սատանի ճամփին կայ, Աստու ճամփին չկայ:

Վնյ տունս, վնյ կտուրս:

Շանը քանի քար գցես՝ կհաջայ:

† Եզը վեր են գցում Ֆորթ ուզում:

† Ձալ օձից կծածը չալ չաթուկից կվախի:

† Կաղ իշին էլ քօռ նալբանդ կըլնի:

Կալ մննող աղուէսը՝ ծեծը պտի շլինքն առնի:

Մինը կայ տասն աթի. տասը կայ՝ մին չ՛աթի:

Էշը ցխումը մնաց, տիրոնջից ուժովը չկար, որ հանի:

Տան ալէն դուս չեն տանի:

Մենծ էշը ախոռումն ա գռում:

Շունը չի սատկի:

Փուչ հօր պատիժը՝ փուչ տղէն ա:

Հօրը տենամ, մօրը տենամ՝ տղէն էլ նրանց պէտ
տենամ:

Պառաւի խօսքին էն վախտը մի անկաջ անի, որ
դուշմանդ գալիս ըլնի:

Պառաւը անբարիշտ կըլնի:

Շունը իրա դռանը գալում կըլնի:

Գողի ջէբը ծակ կըլնի:

Հարամ փողին բինայ չիլնի:

Աշըղի հաղը որ պակսի՝ «նէլնիմ, նէլնիմ» կանի:

Մի ասի էշը քնած ա, թէ քուռակն էլ հետն ա էթում:

Էրկու պառաւ մի սարամիջի չտեղաւորեցին:

Ամեն մարդ իրա դարգը կասի:

260 Ինքը չկայ թիզ ու կէս՝ արարմունքը գազ ու կէս:

Ամեն մարդի իրա պարանով կախ կտան:

Էս ուզտը ամենքի դրանն էլ կչօքի:

Տունդ որ կրակ ընկնի, ձեռներդ էլ վրէն աաքացրա՛:

Թէ Աստօժ չ'աջողայ՝ սուտ ա թէզ վէ կենալը:

Աստօժ որ ուզում ա մէկի տունը քանդի, աղաք

խելքն ա առնում:

Մարդ ինչ ինքը իրան կանի՝ ըսկի մարդ էլա չի
անի:

Ողորմողին էլ Աստօժ կ'ողորմի:

Լաւ մարդի որդին փուչ չի դուս գայ:

Աղուէսը հաւին ասեց.

— Ա՛չքդ լիս, սանամէր. քեզ տղայ ա էլէ:

«Շնորհակալ եմ, ասեց հաւը, թաք ինձանից հե-
ռու ման գաս»:

Մլաւան կատուն մուկ չի կալնի:

Երուսաղէմ էլ առանց շների չէր:

Անտէր մալը եաղին կտանի:

Շողոմքով գառը օխտը մէր կծծի:

Շունը շանից, էրկուսը մի տանից:

Տանուտէրի հեննայ հաշուի նստողը՝ պարտքով վէ
կկենայ:

Էշը իրա ախոռի վրա չի գուայ:

Իշին ասին.

— Ա՛չքդ լիս, քեզ քուռակ ա էլէ: Ասեց.

«Ի՞նչ անեմ, որ բեռը շալակիցս պտի չպակսի»:

Արինը արնով չեն լուանայ, ջրով կլուանան:

Ճրագի աղաքին չախմախ չեն տայ:

- † Իշին հարսանիք կանչեցին, ասեց—հալլանի՛ք ջուր կրելու էք տանում:
- † Փիս խարարը թէզ տեղ կհասնի:
- † Ներքև չեմ նստի, վիրևումն էլ տեղ չկայ:
- † Միրուք շունեմ խօսքս չի անցկենում:
- ձուտը ձուումը մալում կանի:
- † Հարսանքից եղբ դափ ու զուռնայ:
- Ով դատի՛ նա կուտի:
- † Հիւանդի աչքը դռանը կըլնի:
- Ծիտը երազումը կորեկ կտենայ:
- Անշուն գեղ ա գտէ՛ անփէտ ա ման դալի:
- Ստի ոնները կարճ կըլնի:
- Հարստի հագին շոր տեհան, ասեցին—Ծնորհանոր ըլնի. աղքատի հագին որ տեհան, հարցրին—որ դիան ա:—
- Ընչանք խելօքի միտք անիլը՝ գժի տղէն բազար կէթայ:
- Մահը մերն ա, մենք մահինը:
- Այ շուն, ոտ չես տանի՛ ոտ կթողաս:
- Սև սիրտ, սիսլտակ ատամ:
- Տէրաւորինը տէրն ա, անտէրինն էլ Աստօծ:
- Առանց մսուրքի ձի չեն առնի:
- Ամեն մարդ իրա տուն՝ թագաւորին անուշ քուն:
- Անփէշակի կնիկը իրեք օր ա սոված մնացէ. փէշակաւորինը ընչանք ճաշ, նախըջունը՝ ընչանք իրիկուն:
- Էշը մատաղ չիլնի, իշագինը հօ կըլնի:
- Խևը շփօթ եփել չէր գիտայ, գրին վանքին խաւճարար:

243

Լաւութիւն արա՛ ջուրը գցա՛. ձուկը չիմանայ՝ Աս-
տօժ հօ՛ կիմանայ:

Թթու թան չի, ամեն մարդի բան չի:

Մարտի իննը՝ մատը (խաղաղի որթ) կտրա՛, գցա՛
ձինը:

Մարտի ըննին՝ լագլակը գայ բնին:

Շաբաթը թէզ էկաւ, քանց ուրբաթը:

Քօմմայ մօրս քէֆն են հարցնում, ըսկի հօրս քէ-
ֆը հարցնող չկայ:

Եղ ու մեղըը շան տկում:

† Գէլը թողածն էր փօշման, տէրը՝ տարածը:

† Ջուրը իրա ճամփէն կգտնի:

Ձուկն ասեց. — Շատ բան ունեմ ասելու, համայ
բերանս ջուր ա լցվում:—

Ընչանք էրեխէն լաց չըլնի՝ ծիծ չեն տայ:

† Աչքից էլ եմ պրծէ, աչքացաւից էլ:

Ժամը շինուեց, մնաց զմբէթը:

Խճ լողամ, որ խի դողամ:

Փլաւը ամեն մարդ կուտի. ասա՛ ցամաք հաց ուտես:
Ամանաթ ձի նստողը թէզ վէ կգայ:

Քարն իրա տեղը ծանգր կըլնի:

Քու եղը քեզ ըլնի, իմ չոր թանին մի գիպնի:

† Ընկերովի մահը հարսանիք ա:

Տղէն մի օրում ըլնի, մենծանայ՝ էթայ վար ու ցանք:
Անումս Ալի ըլնի, գործս բարի:

† Աղջկանը քնչ վաթան:

Արի հուրի, ծաղկի փարի:

Բարեկամի հեննայ կեր ու խում արա, առուտուր
մի անի:

Բողոքը քանի սէհրակ ըլնի, էնքամ լաւ գլուխ կրունի
Վարդը քաղա՛, փուշը կրակա՛:

+ Գիժը չի ամանչի, գժի տէրը կամանչի:

+ Դարմանը քունը չի, դարմանոցը հօ քո՛ւնն ա:

Աղպէրը աղպօր միսը կուտի, ոսկորները գէն չի գցի:
Էշ ասեն լաւ ա, քանց գէշ:

Թքիլը մի ամօթ ա, լիզիլը էրկու:

Խալխի վրէն շուն կհաջալ՝ մեզ վրայ կատու:

Խլնքոտին ծուխն ա մհանայ:

Հանաքը դանակ կգառնայ:

Հայի եգի խելքն իմն ըլնի:

Հարևանիդ մի կովն ուզա՛, որ Աստօծ քեզ էրկու-
սը տայ:

Հարիւր միրքից մի մի մազ պօկես, մի սաղ մի-
րուք կգառնայ:

Հաց, հաց, ասելօն փոր չի կշտանայ:

+ Հարուստ մարդը օձ կերաւ, ասին՝ դեղ ա. քեասիք
մարդը կերաւ, ասին՝ սոված ա:

+ Հացի կտրածը թուրը չի կտրի:

Հաւը որ կուզալ՝ իմացի փորացաւ ունի:

Ընէնց բան ես ասում, որ էշը ախօռումն ա զուում:

Փորթը որ կովի աղաքն ընկնի՝ գէլը կտանի:

Տէրաւորին տէրն ա տարէ, անտէրին՝ գէլը:

Տասը չափա՛՛ մին կտրա՛:

+ Հացը հացարարին տո՛ւ, մի հատ էլ աւել:

Ո՛վ կհաղալ, նա կկաղայ:

+ Մի ձեռը ծափ չի տայ:

Մի ձեռով էրկու ձմերուկ բռնիլ չիլնի:

Ի՛նչ որ ցանես, էն էլ կհնձես:

Ուրշի հմար ֆոր փորողը՝ աղաք ինքը մէջը կընկնի:

Պատը քանդուելիս թող կանի:

Զին ու զաթիւրը կռուեցին՝ մէջ տեղը էշը սատկեց:
Հարսանիք էթամ՝ թնչ տուն տանեմ. մաստակ ծա-
մեմ՝ թնչ կուլ տանեմ:

† Գիժը զնաց հարսանիք, ասեց — էս լաւ տ, քանց
մեր տունը:

Մտանքին չեն տայ, մատին կտան:

Սէրը սուր ա դառէ, արինը՝ ջուր:

Կժի աղաք դեռ շատ փարչ կկոտրուի:

Աստօժ որ ազուաւի ձէնը լսի՝ Վարդիւորին ձին
կգայ:

Գողը գողից գողացաւ, Աստօժ վիրե զարմացաւ:

Գողն թնչ ա ուզում — մութը գշեր:

Շորն ասում ա — դու ինձ պահանջս բողջամիջի, ես
քեզ պահեմ մարդամիջի:

Ընչանք մարդի սիրտ չցաւի, աչքից արտասունք
չի գայ:

Մուկն իրա ծակը չէր կարում մննի, ցախաւելն
էլ պօչիցը կապեցին:

Շունը շան թաթը չի ծամի:

Փէտը վեր ունես՝ գող շունը կիմանայ:

Երեխէն ասեց՝ փայս քիչ ա, կատուն էկաւ էլաժն
էլ ձեռիցը խլեց:

† Եշ նստիլը մի ամօթ, վէ գալը՝ էրկու:

Զիդէն գողացողը՝ աղաք տեղը կանի:

Զիդէն ջուալ չի մննի:

Անջուր չեն բորկանայ:

Ոտդ կարպետիդ գետրայ մեկնան:

Կատուին հաղ ա, մկանը մահ:

Տանու տէրտէրին «օրհնեա՛ տէր» չկայ:

317

Սուտ ասողի տունը կրակ ընկաւ՝ մարդ չհաւատաց:
Մարդի աչքը դուս գայ լաւ ա, քանց անուձը:
Շատ անողին՝ շալ շապիկ, քիչ անողին՝ ալ շապիկ:
Մի տարի գառնութիւն արա՛, օխտը տարի գէլու-
թիւն՝ էլի գառնութիւնդ կասեն:

Խոփդ սուր ա, համայ հանգը բաժանովի ա:

Շան բախտը ոտի տակին կըլնի:

Սեին սապոնն ինչ անի, խեին խրատն ինչ անի:

Քաշալը գեղ իմանայ՝ իրա գլխին կանի:

Գժի աղունը Աստօժ կ'աղայ:

Ե՛ս աղայ, դո՛ւ աղայ՝ բաս մեր աղո՛ւնն ո՛վ աղայ:

Շունը հաջալօն կսատկի:

Կոզնուն գրին խալիչի վրէն, թօլ էլաւ, ընկաւ
գետինը:

Կուժը ջրի ճամփին կկոտրուի:

Որդէ հաց՝ ընդէ կաց. որդէ գինի՝ ընդէ քնի:

Ասու պահած դառը գէլը չի ուտի:

Հարկս հարկաւորաց, պատիւս արժանաւորաց:

Պառաւն իրա թանին թթու չի ասի:

Մկան շեւը ջաղացին օգուտ ա:

Ուղտին ասին— շինքդ ծուռն ա. ասեց— քնչս ա
դուզ, որ շինքս դուզ ըլնի:

Կեսուրս մեռաւ, տեղս լենացաւ:

Գողը տանու ըլնի, եզը երգկովը դուս կքաշի:

Հացը գցած՝ բանն անիժած:

Շան հեննայ ընկերացի՝ փէտը ձեռիցդ մի՛ վէ գցի:

Գարտակ կարասը զիլ ձէն կհանի:

Անուձը տո՛ւ՛ հացը գցա՛:

Լաւ ձին՝ գարին կ'աւելացնի. փիս ձին՝ ղամշին:

Դրուստ խօսողի գտակը ծակ կըլնի:

Գիտուն աղուէսը ջուխտ ոտով թալաք կ'ընկնի:
Թունդ քացախը իրա ամանը կտրաքացնի:
Մարդ մարդի դարդ չի իմանայ՝ կէս գշերին ժամ
կկանչի:

Ձուի գողը՝ ձիու գող կ'դառնայ:

Խաչը տէրը զօրաւոր կանի:

Փախի էն ջրիցը՝ որ մարմանդ ա:

Բարատու ծառը գլուխը կախ կգցի:

Նոր նոր հաւեր են դուս էկէ, երկաթէ ձուաներ
են ածում:

Ղունգը մտիցը պոկիլ չիլնի:

Աղուէսի դունչը հաւողին չհասաւ, ասեց՝ խակ ա:

Խորովածի ֆոտի գնաց, տեհաւ էշ են խանձում:

Ունքը շինելու տեղակ՝ աչքն էլ հետը հանեց:

Աղջիկը որ կայ՝ անկտրիլ ձմերուկ ա:

Ծիտն թնչ ա, որ իրա եղն ինչ ըլնի:

Կաթի հեննայ մտածը՝ ֆոգու հեննայ դուս կգայ:

Էծը իծի հմար լաւ ա, քանց մի սուրու ոչխարը:

Գինի՝ էրմանն գինի:

Սոխ ու հաց՝ սիրտը բաց:

Անձրևի վարարիլը՝ բարակելու նշան ա:

Կնկայ մագերը երկար ա, խելքը կարճ:

Կնկայ խելքը չօքերումը կըլնի:

Կուշտը սովածին մանդը կըրթի:

Հնյ-հնյս գնացել ա, վնյ-վնյս ա մնացէ:

Էրեխուն բանի դի, հեննէն գնա:

Հպարտին դռանը ծեծեցին, տանը բան չ'ասեց:

Մարդ մարդի բաղ տուեց, մարդ մարդի պտուղ

չտուեց:

Երես մի տայ, աստառ կուզի:

Կնկայ խոստովանատունը դարտակ կըլնի:

Էշը չի՛ պօչն ա:

Բուբուկից Ֆօտ էր գալի, հէնց գիտար բնիցն ա:

Շատ մի սիրի, ատիլ կայ. շատ մի ատի՛ սիրիլ կայ:

Շատ պարծենողը պարկը կմննի:

Գմակաւոր ոչխար ես՝ քու ետեւը ծածկա՛:

Անամօթ մարդի երեսին թքեցին, ասեց՝ անձրև

ա գալի:

Ինչ բրթես՝ էն էլ կխրթես:

Սև օրին էլ՝ սև շոր ա պէտք:

Բարիկենդանին կերակուրը շատ կըլնի:

Իշի բեռը քանի ծանդր ըլնի՝ էնքամ երիշը աւել

կըլնի:

Բանն ո՞վ անի—ես ու դու. հացն ո՞վ ուտի—ես ու

դու:

Եայլու մէջ ընկնողը պար կգայ:

Հաւին հազար հետ էլ կուտ տո՛ւ՝ էլի կտուցը գեն-

նին կքսի:

Ուրշի ձեռով փուշ էլ մի բռնի:

Գիլի գլխին Աւետարան կարդացին, ասեց—[թէզ

արէք, ոչխարը սարն անցկացաւ:

Բերնէ բերան—հազար բերան:

Հաւը տանը մնայ՝ կուտ ուտի:

Ուղտի հաղը կարմնջի վրէն բռնեց:

Կաղին կարմնջումը կկալնեն:

Մարդս սր մարդ ըլնի, էլ ո՞վ դարդ կանի:

Աղէն որ ձէթ տայ՝ գողգ բաց արա՛:

Գողգի նստե՛ձ, միրուքդ պոկեմ:

Ձուկը գլխիցը կՖոտի:

Ասողին էլ լսող պտի:

396

Ծովիցը մի գդալ ջուր վեր ունես՝ ծովի ջուրը չի
սլակսի:

Ընչանք ամպը չգոռայ, անձրև չի գայ:

Ճանճն ածի՝ ճիճուն տանի:

Ծերանաս՝ ծերի զադրն իմանաս:

Էրկաթը տաք տաք կծեծեն:

Էրկաթը ստի հալես, որ շէնք դառնայ:

Գարտակ փէտին շուն չի հաջայ:

Ասեզը քեզ խրն, եննայ մախաթը՝ հարևանիդ:

Մենձի ասած, պուճուրի լսած:

Խօսքը մենձին, ջուրը պուճուրին:

Գիժը մի քար գցեց ծովը՝ հազար խելօք հաւաք-
ուեցին, չկարացին հանի:

Ջրի պէս էթում ես, աւազի պէս մնում:

Աղաք ոտաւորն ուտենք, անտը մեր նօքարն ա:

Ժամի խունկ ու մումն էլ կսլակսի:

Եազը եազի մեռելը հաղ կանչելօն կթաղի:

Ա՛ռ ու տուր են ասէ, ոչ թէ՛ առ ու կուլ:

Շէն տան աղջիկ, թաղայ հացի կարօտ:

Մի ժամ քանդիլը լաւ ա, քանց աղջկայ անում
կոտրիլը:

Ի՞նչ եմ անում ոսկէ լականը, որ միջին պտի արին
թքեմ:

Հասկացողին մին, չհասկացողին հն կնց ու ասն:

Էլն իմացաւ, եարաբ բէլն էլ իմացաւ:

Շատ գիտաս, քիչ խօսն:

Ուրշի պարանով ֆոր մի մննի:

Հունար ունես՝ գաթէն ծոցիդ պաս պահն:

Լացացնողի կուշտը գնն, ծիծաղացնողի կուշտը
մի էթայ:

Մարդ կայ տէրաէր կսիրի, մարդ կայ՝ տէրաէրակի
 Շոր սու, շնորհք տամ:
 Ոսկին պուճուք ա՛ գինը մենծ:
 Օձը խմրախոտից էր փախնում՝ բնի աղաքին է
 դուս գալի:
 Մի ծաղկով զարունք չի գայ:
 Պարտքը տալօն, մեղքը լալօն:
 Փրագէն ձիաւորի վրէն կծի՞ծաղայ:
 Ամեն հետ տաար գաթայ չի բերի:
 Բանն արա՛ եննայ պարծեցի:
 Ժամիցը են եմ գալի, «Ողորմի Աստօժը» դու է
 սուում:
 Էլանց հարսը սիրուն կըլնի:
 Ամառուայ փուշը՝ ձմեռուայ նուշը:
 Ապրիլ կայ՝ էրկաթ ա, ապրիլ կայ՝ էրծաթ ա:
 Գէլին տամազլըղ չիլնի:
 Ման ա գալի խոշի, տանը չկայ մի զգալ փոշի:
 Սերը սովորը կուտի, թանը՝ մօլորը:
 Մին մի տայ՝ էրկու կուզի:
 Հլա մինը, սըր ա տասնը մինը:
 Սև ըլնի, բօլ ըլնի, մինն էլ կշախ թօլ ըլնի:
 Անաղը պրծաւ, տոսղը չպրծաւ:
 Աստօժ ազատի ալափստարակի քացուցը:
 Պառտին ստեցին՝ ճրագը փշա՛ ստեց փշել էլ եմ
 տեսէ էր:
 Ժամի դուռը բաց ա, հասայ շունն էլ պտի երե
 ունենայ:
 Օձը աղաք տաքացնողին կիծի:
 Աղպօր աղայ՝ ջան աղայ, քվօր աղայ՝ ջան աղայ:
 Ամառ ձմեռ մի խելքն ի՛նչ անի:

Ամեն օր կուժը ջուր չի բերի:
 Թէ՛ փող սենես՝ սրտումդ էլ եղ ունես:
 Բողազ՝ ինչ կաննաս կողոպտա:
 Ասամ քչպորեւոն փոր չի կշտանայ:
 Էրկու գժին մի խելօք:
 Իրա հմար քնում ա, ուրչի հմար քրագ տենում:
 Քանց «հա» ասեմ՝ միջին մնամ, չէ՛ մկանեմ՝
 կպրծնեմ:

Լաւ տանձը արջն ա ուտում:
 Ջուր խմելին՝ օձն էլ մարդի չի տայ:
 Կատուն որ մուկ ա բռնում, հօ ուտելու դարդը
 չի՝ ծվծվացնելու դարդն ա:
 Արդի հօ չեն ասէ՛ սրգ են ասէ:
 Զէթը ճրագին հասաւ:
 Մի կօս կորեկ շարելը հեշտ ա, քանց մի սրդի
 մենծացնելը:

Էծը կաւին գուս:
 Կաղ իշով քարվան կէթաս:
 Լաւ հունձ անողը հանդումն էլ կհնձի, սարումն էլ:
 Զու-ածան հաւը կչկչան կըլնի:
 Ով շուշա, նա կուշա:
 Ասած անգգամից երես ա թեքէ:
 Ով կկարդայ՝ նա մարդ ա:
 Ես աղն ա պակաս, ես մաղը:

Զուկը ծոփումը կմենծանայ:
 Եան կազալուն մի հուստար:
 Անվախս զօնաղը իրա քիսիցը կուտի:
 Արդէ ա՛ն՝ բնդէ բաշ:
 Զունես փող՝ մաթի Քոզ:
 Մօրը բախա, աղջկանդ թախա:

- Համբերութիւնը կեանք ա:
Եշտ գէլը կերաւ. — գէլս էլ մի գէլ ըլնէր:
+ Քոստո եծը աղբրի ակիցը ջուր կխմի:
+ Եանից մազ պօկիլը խէր ա:
Եգի շունը վազկան կըլնի:
Պղինձը ըլնելիս կթափի:
Եների քոստոն ա կատաղէ:
Արջն իրա ահիցը կգոռայ:
Պար չեմ մննի, որ մտայ՝ էլ գուս չեմ գայ:
Հին դարմանը քամուն չեն տայ:
+ Եունը շան միտը չի ծամի:
+ Երկէն մարդի խելքը չօքբերումը կըլնի:
Վազկան շունը ֆորսկան կըլնի:
Գողի լիզուն կարճ կըլնի:
Ղարիբ շան ոտը եարալու կըլնի:
Ղարիբ գեղ ման էկողի ձեռին էրկու դազանա
պտի ըլնի:
Ճամփայ գուս էկողի տրեխը թազայ կըլնի:
Ընչանք Եուշանը դարգարուի՝ ժամը կարձակուի:
Ձուն հաւին ինչ կթուայ. — կկուկուայ՝ մըն էլ կածի
Մարգիս իշտահը ատամի տակին ա:
Տկլորը սարը նի էլաւ՝ սարի անումը խաղկ արե:
Փողը ծըլընգ՝ բանը տըլընգ:
Տէրտէրին հարսանիք կանչեցին՝ Մաշտոցը հեա
տարաւ:
Գառն ու գէլը որ մի ձորում ուստ գան՝ վս
գառի հալին:
Գող կատուն պառաւի կշտին կնստի:
Եունը հաջալօն կմենծանայ:
Հաւը որ չաղանայ՝ ձու չի ածի:

Քօռն ու քաչալն աղպէրացան, չորս օրից եղը
բաժանուեցին:

Գող մարդը ռանգից մաշուը կանի:

Տէրտէր արն գեղը գցն. թէ որ չապրի՝ գետը գցն:

Մեղը ծախողը մատը կը լպտտի:

Աւելորդ թիքէն փոր չի ծակի:

Ամեն ծաղիկ իրա ֆոտն ունի:

Կգայ տարին՝ հետը բարին:

Մարդու կնիկ կռուեցին՝ կատուն թունդիրը գցեցին:

Օձն արեւիցը կհարբի:

Գժի հմար ամեն օր «չնորհաւոր տարի» ա:

Շուն հաղացնողի ձեռին փէտ կըլնի:

Լաւ գալլաք ես՝ խի՞ չես քու միրուքը վեր անում:

Դեը դարբնոց չէր էթում, զօռով տարան:

Ո՛նչ հայի խունկ ա, ո՛նչ թուրքի ուզարլու:

Կարկուտը՝ տուած տեղը կտայ:

Ընչանք շաւը միտք չանես՝ խէր չի գայ:

Ջուրը ջաղացն ա տարէ՝ չախչախն ա հարցնում:

Ալու դարդը փլաւն էր:

519

Հ Ա Ր Ս Ա Ն Ե Ա Ց Ե Ր Պ *

(Նորափեսային)

Թագւոր, բարով, խաղար բարով,
Դու նու՛նուֆար ես թփերով.
Էն էջմիածին քեզ սա՛հապան,
Մի Աստճու զօրութիւնով:

Թագւոր, քնչ բերեմ քեզ նման,
Քու կանանչ արեւիգ նման.
Էն արեղալին, որ կը բացուէ,
Բացուէ արեւիգ նման:

Թագւոր, քնչ բերեմ քեզ նման,
Քու կանանչ արեւիգ նման.
Աղպրանց արուն*) որ կը բացուէ,
Բացուէ արեւիգ նման:

Թագւոր, բարով, խաղար բարով,
Դու նու՛նուֆար ես թփերով.
Էն աղօթրան որ կը բացուէ,
Բացուէ արեւիգ նման:

*) Նոր-Բայսղէտի նահանգի գիւղերում, հարսանեա
հանգիսի ժամանակ, հարս ու փեսային այս երգով են զի
մաւորում:—Նրդիս իւրաքանչիւր տան վերջը, հարսնքաւոր
ձայն է տալիս. «Աստու՛ած շնորհաւոր անէչ»:

*) Կարմիր ծաղիկ:

(Նորափետայի մօրը)

Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել:
Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ դուբալ զազ եմ բերել:

Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել:
Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ ծամ փետող եմ բերել:

Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել:
Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ ստնեք լուացող եմ բերել:

Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել:
Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ տախտ աւլող եմ բերել:

Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ ինչ ու ինչ եմ բերել:
Թագաւորի մէր, դուստ արի,
Քեզ գլուխ տփող եմ բերել:



ՄԱՌՁԱՐԴԱՐԻ ԵՐԳ՝

Անագ, անագ՝ ճօճանակ,
Մննեմ ժամը, ժամ անեմ,
Գուս զամ պատարագ անեմ,
Սև եզը մատաղ անեմ:

—

Ընկերս ընկաւ ծովը,
Ծովը դառաւ ծիրանի,
Ծիրանին դառաւ Հայլի,
Հայլին դառաւ պատկերք:

—

Բօզոն էկաւ կեռ կտուց,
Հաւը տեղիցը թռցրեց,
Էրկու ձու ետևիցը բլցրեց.—
Մինն ինձ, մինն իմ ընկօրը:

Ով տայ՝ շէն կենայ,

Ով չտայ՝ չոր փարչի պուունգը պաշի:

*) Մատաղարդարի օրը, Վաղարշապատ գիւղում երե-
խայք շրջում են տները այս երգը երգելով. միևնոյն ժամա-
նակ պտտեցնում են «ճռէգ» ասուած խաղալիքը և ձու-
իւղ, բրինձ ժողովում:

Ճան.—Բօստան, բօստան վարել ես,
 Կարմիր չուխայ կարել ես,
 Հազար բաներ ցաննել ես,
 Միջի թաղը խիարի,
 Դրսի թաղը ծիրանի.
 Դու իմ մօրը խնամի,
 Կարմիր վաղեր հաւողի.
 Հաւող չըլնի, նուռ ըլնի,
 Չմերուկը շատ կըլնի,
 Միջի համր լաւ կըլնի,
 Եմիչ, խիար չեմ ուզի.
 Գաղարն ու խիարը քեզ ըլնի.
 Բողկի մինը մեզ ըլնի.
 Բօստանչի աղսէր, մի սոխ տանս:—

Բօստ. «Կորի, գլխիցս ռադ իլ:»

Ճան.—Այ օրանայ, օրանայ,
 Քու բօստանը չորանայ,
 Էրկու աչքդ քօռանայ.
 Աջու ձեռդ թիլանայ,
 Բօստանդ չթով վարեմ.
 Զուխտ տղիդ պատանը կարեմ.
 Զիգեարով դու քար ես.
 Իրեք օր ու կէս ապրես.
 Երքայութիւն չմնես.
 Դժոխքի մեջ էրուես,
 Էլ չեմ ուզում քու խէրդ.
 Սոխի ջուրը աչքերդ:

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Թագման Հանդէս:
2. Նաւ:
3. Աչք:
4. Կշիռ:
5. Արագիլ:
6. Մասուր:
7. Աչքի բիբ:
8. Մկրտաւ:
9. Աքաղաղ:
10. Լուսին:
11. Գիր, գիրք:
12. Զուր:
13. Երկինք:
14. Գիշեր և ցերէկ:
15. Զահրայ: (բամբակ մանելու գործիք)
16. Գդակ:
17. Մուխ:
18. Բողկի սերմը, որ երբ բուսնում է՝ ահագին զլուխ է բուսում:
19. Աթոռը և նորա սաները:
20. Երկանքի վերին քարը:


21. Այն էջի ծնօտը, որով Սաւմսոնը շատ մարդիկ սպանեց:
22. Մարիամ. Եղիա և Ենոքը:
23. Լուցիկի:
24. Տար/ն՝ որ 12 ամիս ունի, ամիսը 30 օր:
25. Մովսիսի գաւազանը, որ ձգեց զԵստինը՝ օձ գառաւ:
26. Զբաղաց:
27. Աստղեր:
28. { Անուն:
29. {
30. Զու:
31. Զրէխ: (բամբակ մաքրելու գործի)
32. Մուկ:
33. Մատանին և մատը:
34. Զուրը և կամուրջը:
35. Վառած մոմ:
36. Ծրագի լոյս:
37. Սիւն:
38. Ալիւրի տաշտ:
39. Արեգակ:
40. Նուռ:
41. Երկինքը սիւն չունի, ծովը՝ ծածկոց, զաթիրն էլ՝ ծին:
42. Վիլիլանք: (թել լեռ տալու գործի)
43. Թուղթ:
44. Տեղաշոր:
45. Սազ:
46. { Հրացան:
47. {

48. Թուղթ և գիր:
49. Ամս:
50. Տարուայ 12 ամիսները:
51. Ծիծեռնակ:
52. Գալ:
53. Գուլպայ գործելու 5 մլերը:
54. Այգի. այգեկուլթ:
55. Օրորոց:
56. Զմերուկ:
57. Շրթունք:
58. Փուքս:
59. Բերանը և ատամները:
60. Քիթ:
61. Կնոջ ծծերը:
62. Օձ:
63. Գետը և կամուրջը:
64. Սազ:
65. Կասկառանք:
66. Արծեւլին և մազերը:
67. Մատներ և եղունգներ:
68. Գդակ:
69. Ուղտի նոխտէն:
70. Զուկ:
71. Եափնջի:
72. Գազար:
73. Արեգակ, լուսին և աստղեր:
74. Գաթայ:
75. Լեզու:
76. Օձ:
77. Սիսեռ:


78. Կարմիր ծովը և Մովսիսի գաւազանը:
79. Աքաղաղ:
80. Կողպէք և բանալի:
81. Թեւ և ասեղ:
82. Նանապարհ:
83. Կրիա:
84. Բերան և ատամներ:
85. Սունկ:
86. Կնոջ ծծերը:
87. Հրացան:
88. Մուկը և նորա բուներ:
89. Զիու սմբակը:
90. Զորի:
91. Մորեխ:
92. Քրիստոսի պատմուճանը:
93. Փշատ:
94. Կով կթող կնոջ 10 մատները. կովի 4 պտուկը
և կաթով լի կովկիթը:
95. Ադամ և Եւա:
96. Ինքնաեռ:
97. Մեղրի հաց:
98. Զրաղաց:
99. Աչքեր:
100. Գօզրի սերմը:
101. Մովսիսի գաւազանը, որով նա Կարմիր ծովի
մէջ ճանապարհ բաց արեց:
102. Սաջ:
103. Նուռ:
104. Զիթի ճրագ:
105. Ասեղ և թեւ:


- 106. Զուկ: .87
- 107. Եզը երբ ծնում է՝ 4 ծիծ է ծծում: Երբ մեծանում է՝ գուլթան են լծում, իսկ երբ սաակում է՝ նրա կաշուից արեխ են կարում և հանում: .88
- 108. Կարմիր ծովի լատակը, որ Մովսէս գուազան գորութեամբ բաց արեց և Բարալէլայիք տնցան .88
- 109. Աչք: .88
- 110. Երկինք և աստղեր: .88
- 111. Երկանք: .78
- 112. Թուղթ և գիր: .88
- 113. Կուժ: .88
- 114. Տրեխ և սո: .80
- 115. Ոսներ: .91
- 116. Միտք: .92
- 117. Զահրի իլիկ: .89
- 118. Սառույց: .94
- 119. Քուն: .95
- 120. Կով: .96
- 121. Յորնի արտ: .96
- 122. Փշատ: .96
- 123. Ատամի որդ: .98
- 124. Սագի թագանան, որով զարկում են նրա լարերին: .99
- 125. Հաւր, ձուն և թուխար: .101
- 126. Զիբուխ: .99
- 127. Կալծաբար: .99
- 128. Ալիւրի մաղ: .99
- 129. Աբէլը՝ Կալէնի եղբայրը: .101
- 130. Նոյն: .99

131. Ծով և երկինք:
132. Կրիստ:
133. Ղամէքը, որ Կալէնին սպանեց:
134. Մուխ:
135. Եւա:
136. Խաղողի որթը, որ արմատի մօտ ծուռն է, ճիւղերը՝ ուղիղ. առած խաղողը՝ քիւրը խելօք է, իսկ նորանից սպարատած գինին՝ աղսէրը զիծ:
137. Լեզու:
138. Գինու աիկ:
139. Ռանգայ:
140. Երկինք, լուսին, արեգակ և աստղեր:
141. Ոսկի:
142. Մի կին, գետուճ լուսոցք անելիս՝ սալոնով տալիս է մէկ ձուկ վեր գցում: — Սորա վերայ է ասած այս հանելուկը:
143. Այդ թուղթը մարդի սիրտն է, իսկ գրիչը, լեզուն:
144. Սուր և պատեան:
145. Հինգը բաժանած երեքի վրայ:
146. Յորէն:
147. Սեղան:
148. Հրացան:
149. Մորդս՝ մանկական, այրական և գառամեալ հասակներում:
150. Յորէնի հատիկները, որ բովելիս՝ գէս-գէն են թռչկոտում:
151. Բերան և ականջներ:
152. Սառւեր:
153. Ջրագացի թօփը:



- 154. Արեգակ:
- 155. Կաղամբ:
- 156. Աստղեր:
- 157. Աւել:
- 158. Կասկառանք և կաթսայ:
- 159. Խնոցի:
- 160. Մարզի գլխի մագերը:
- 161. Յորէն:
- 162. Հրացան և զնդակ:
- 163. Մկրատ:
- 164. Եղինջ: (բոյս)
- 165. Երկինք և աստղեր:
- 166. Գիւղական տան սիւնը, գերանները և կոճերը:
- 167. Ասեղ և թել:
- 168. Կամը և նորանից լծած մի զոյգ գոմեշները:
- 169. Գիւղացու մորթէ գգակը:





Պիւնն է 30 Կ.

Վաճառվում է Տփսիսում՝ Կովկասեան և Կենդրոնա-
կան գրավաճառանոցներում. իսկ Երեւանում՝ պ. Ն.
Սիմէօնեանցի գրախանութում:

Տպագրութեան համար պատրաստ է եւ շուտով մամուլի
բանկ կը մտնի «Ջ. Ա. Ն-Պ 0 1, Ա Տ» անունով հայ-ժողովրդական
Հէքիաթը:

